

ՊԱՏՄՎ - ԲԱՆԱԿԻՐԱԿԱՆ

Հ Ա. ՍՎԱԶՅԱՆ

ԱՂՎԱՆԻՑ ԿԱՌ-ՌԵԿՈՍ ՄԱՆՈՒԿ ԳՐԻԳՈՐԻՍ

Ըստ Աղվանից հայրապետների ցամկի, որ բերում են Մովսես Կաղանկատվացին ու Մխիթար Այրիվանեցին, Աղվանքում առաջին քրիստոնյա քարոզիչ Ս. Եղիշային¹ հաջորդել է «տէր սուրբ Գրիգորի Պահլաւիկ՝ թոռն Մեծին Գրիգորի Հայոց լուսաւորչին»²: Նրանց հակառակ, Մխիթար Գոշը Եղիշայից հետո հիշյալ ցամկում գետեղում է Օուփիանիշու անունով մեկին, մի խումբ այլ հայրապետների և ապա միայն Գրիգորիսին³: Կիրակոս Գանձակեցին էլ է բերում նոյն ցամկը, ինչ որ Մխիթար Գոշը, բայց նաև իր տարակուսաճըն է հայտնում Օուփիանիշու ներթականության վերաբերյալ: «Բայց վասն առնս այսորիկ յառաջ կարգելոյ՝ երկմտութիւն գոյ մեզ, - գրում է նա և պատճառաբանում, - զի որ գրեաց զապատմութիւնն Աղուանից (Ակատի ունի Մովսես Կաղանկատվացուն - Հ. Ա.) զայս անուն կարգէ յաւուրս Վաշագանայ Բարեպաշտի լեալ ... Եւ յետ այսորիկ այս անուն ոչ գուամի ի կարգ համարոյ եպիսկոպոսաց»⁴: Կարծում ենք, իրավացի է Կ. Գանձակեցին և նրա կասկածանքը՝ տեղին: Օուփիանիշոն, իրոք, գործել է շատ ավելի ուշ՝ Վաշագան Գ Բարեպաշտի ժամանակներում (488-510 թթ.) և չեր կարող հաջորդած լինել Եղիշային⁵: Ուրեմն ճիշտ են Ազված պատմիչներից առաջին երկուսը, որոնց տվյալների համաձայն, Եղիշային Աղվանքում հաջորդել է Մանուկ Գրիգորիսը⁶: Այսպես են կարծել նաև հետագա ուսումնասիրողները⁷:

«Մանուկ» մականումն ստացած Գրիգորիսի ու նրա գործունեության մասին պատմում են Փ. Բուգանդը, Մ. Խորենացին ու Մ. Կաղանկատվացին: Նրանք էլ նրան անվանում են Աղվանքի «Եպիսկոպոս» ու «Կաթողիկոս»⁸:

¹ Հ. Սվաջյան, Սուրբ Եղիշան Հայոց Արևելից կողմանց, Չողա երկորի ու Աղվանից աշխարհի լուսավորիչ, Լիաքեր հասարակակամ գիտությունների, 2000, թիվ 2, էջ 55-56:

² Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 342: Նաև՝ Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, Մովսես, 1860, էջ 19:

³ Ղ. Ալիշան, Հայապատում, Վեմետիկ, 1901, էջ 384: Կաղանկատվացի, էջ 350:

⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 194:

⁵ Օուփիանիշոյի մասին հանգամանորեմ՝ մի ուրիշ հոդվածում:

⁶ Աղվանից հայրապետների շարքում չի հաշվվում Տրդատ Գ-ի ու Գրիգոր Լուսավորչի հետ Հոռմ քաղաքից եկած քրիստոնյա քարոզիչը, հավամարա հույն, որը մախորդել է Մանուկ Գրիգորիսին Աղվանքում:

⁷ Հովհ. Շամիսաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ Հջմիածնի և հիմն գաւառաց Այրարատայ, թ. 2, էջ միածին, 1842, էջ 333:

⁸ Փատոս Բուգանդացոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1987, էջ 20 և Բայց. Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան 1991, էջ 259: Կաղանկատվացի, էջ 31 և Բայց: Զնաման պատմիչները Գրիգորիսին մեծարում են մասն գերապատիկ տիտղոսներով, բայց նա չի կարող դիտվել որպես այլպիսի: «Կաթողիկոս»-ը նկեղեցական-վարչական գերագույն կենտրոնական իշխանության մոգուր ծայրագույն պետն էր, իսկ «Եպիսկոպոս»-ը բարձր աստիճանամակոր արդեն կազմավորված կաթողիկոսության համակարգում: Մասմակորապես,

Համաձայն պատմիչների հաղորդումների, Մանուկ Գրիգորիսը Լուսավորչի տոհմից էր, Հայոց Կաթողիկոս Վլթանեսի երեց որդին, Մեծն Գրիգորի թոռը, որի անունն է Կրոս էր: Նա եղբօք՝ Հուսիկի Բեն մանկությունն ու պատանեկությունն անցկացրել է Տրդատ Գ-ի պալատում, թագավորի աշքի առաջ և նրա հոգածությամբ էլ կրթություն ատացել՝ դառնալով, ինչպես Բուզանդն է բնութագրում, աստվածագիտությանը հմտութ, հոգնոր արժամիքներով լի ու առաքինի ամճ⁹: Բուզանդից մետք նրա նովան հատկանիշներն են ընդգծում նաև Կաղանկատվացի՛՛ նրան նմանեցմելով իր մեծ պապին ինչպես անունով, այնպես էլ Վարքով¹⁰: Իր առաքինությունների շնորհիվ էլ նա, դեռ պատանի («թէպետ և յանլիորին աւորցն»)¹¹ Աշանակվում է քարոզական աշխատանքի, սկզբնական շրջանում այն ծավալելով Հայոց երկրի ծայրամասային նահանգներում, մասնավորապես Փայտակարանում ու Արցախում, ապա Աղվանից ու Վրաց երկրներում և Մասքարագ աշխարհում:

Համաձայն պատմական սկզբնադրյուրների, Մանուկ Գրիգորիսը Փայտակարան է գնացել այս քաղաքի վերակացումների խնդրանքով, որոնք, գալով Տրդատ Գ-ի մոտ, իրենց համար քարոզի են խնդրում Լուսավորչի սերնդից, որպեսզի Մեծն Գրիգորի հոչակված անվան շնորհիվ ակնածեն նաև նրա սերնդակցից և վարչեն վերջինիս հրահանգների համաձայն¹²:

Քրիստոնեությունը թեպետուն Հայաստանում արդեն պետական պաշտոնական կրոն էր, սակայն դարերով արմատավորված հեթանոսությունը դեռևս խոր արմատներ ուներ, մասնավանդ երկրի ծայրամասերում, ուստի Տրդատ Գ-ն, որը «Մեծաւ պեղութեամբ առնելու վրէժմանդրութիւն հաւատոց և վարուց ... առաւել այնոցիկ, որ բացեայ կողմանըն էին յիրում իշխանութեան»¹³, Մանուկ Գրիգորիսին ուղարկում է Փայտակարան, թեև նրա անչափահանությունը թույլ չէր տալիս դա անել՝ «Պարականոն զիրն վարկաներ»¹⁴: Մանուկ Գրիգորիսին ուղարկելով Փայտակարան, Տրդատ Գ-ն նրան աշակից է Աշանակում Մա-

Աղվանքում Ակնեցական կենտրոնական իշխանությունը կամ կաթողիկոսությունը ձևավորվում է միայն 6-րդ դարի կեսերին, երբ կազմավորվել էր Աղվանից մարզպանությունը որպես վարչա-քաղաքական միավոր և նրա ողջ տարածքում գտնվող եկեղեցները դարձել են մեկ ընդհանրություն: Մինչդեռ Գրիգորիսը, որ գործում էր 4-րդ դարի 30-ական թթ., չէր կարող լինել այդ երկրում ավելի ուշ առաջացած քարդրագույն բոցներ մարմանի պետու: Այդ վաղ ժամանակներում Աղվանքում քրիստոնեությունը ոչ միայն նոր պետական պաշտոնական կրոն չէր, որ ուժմատ իր կենտրոնական իշխանությունը, այլև նոր-մոր էր տարածում գտնում երկրում և դրսևորվում էր համայնքներում: Ուստի, ճիշտ չեն պատմիչների կողմից Գրիգորիսին տրվող Ամամ տիտղոսները, որոնք ավելի շուտ խորհրդամշական են, նրա բարձր հետինակության և կատարած մեծ գործի գմարտաման արդյունք: Իրականում Մանուկ Գրիգորիսը Աղվանք (նաև Վիրը ու Մասքարագ երկիր) է մեկնել սուկ որպես քարոզիչ՝ այդ երկրը ավետարամական լուսով լուսավորելու համար, իսկ Աղվանից առաջին կաթողիկոսը Արամ էր, որը բովվել է 552-59 թթ.:

⁹ Բուզանդ, էջ 30:

¹⁰ Կաղանկատվացի, էջ 36:

¹¹ Խորենացի, էջ 259:

¹² Նովան տեղուած:

¹³ Նովան տեղուած:

¹⁴ Նովան տեղուած:

Աստրուկ ամունով մեկին, որը մովման Արշակունի էր և Տրդատ Գ-ի ազգակիցը¹⁵: Դա տեղի է ունենում կամ Տրդատ Գ-ի մահվան տարում 330 թ., կամ դրանց քիչ առաջ, եթե Հայոց Կաթողիկոսը դեռևս Գրիգոր Լուսավորչի կրտսեր որդին էր՝ Արիստակեսը (325-333 թթ.): Փայտակարանում Գրիգորիսը, Խորենացու պատմելով, «լիներ օրինակ բարի, հայրենականօքն վարելով առաքինութեամբք. այլ կուսութեամբ գեր ի վերոյ քան զիարան, և պատժականա զոյտ ընդ թագաւորին»¹⁶: Դատելով Խորենացու այս վկայությունից, Գրիգորիսը կարողացել է տեղի բնակչների մեջ սերմանել քրիստոնեական հավատը՝ դրա համար օգտագործելով բոլոր միջոցները՝ թե՛ քարոզներ ու հորդորներ և թե՛ պատիժներ:

Փայտակարանից Մամուկ Գրիգորիս անցնում է Արցախ և քարոզչական աշխատանքներ տանում նահանգի Հաբանդ դավառում Փայտակարանին աշխարհագրորեն սահմանակից վայրում: Այստեղ ևս ևս հասնում է որոշակի հաջողությունների. հաստատում ու ամրապնդում է քրիստոնեական հավատը, հիմնում համայնքներ և իր գործի շարունակության համար աշակերտներ պահում, որոնցից մի քանիսի ուղեկցությամբ էլ հնտագայում մեկնում է Աղվանք:

Աղվանից իշխող վերմախսավը ևս դիմում է Հայոց թագավորին և կաթողիկոսին՝ իրենց աշխարհի համար կաթողիկոս ուղարկելու խնդրանքով, ընդ որում Ըկատի ունենալով հատկապն Մամուկ Գրիգորիսին: «Խնդրեցա լԱղուանից մանուկն Գրիգորիս ի կաթողիկուսութիւն իրեանց»- գրում է Կաղամկատվացին¹⁷, որը հաստատում է Մխիթար Գոշը՝ «խնդրեցին Աղուանքի ի Հայոց՝ կաթողիկոս զսուրբն Գրիգորիս»¹⁸: Եվ ահա, ընդառաջելով Արանց խնդրանքին, հայոց թագավորը, որն այդ ժամանակ Տրդատ Գ-ի որդին էր՝ Խոսրով Գ-ը (330-338 թթ.), իսկ ժամանակի կաթողիկոսն էր Գրիգորիսի մյուս որդին՝ սպանված եղբորը՝ Արիստակեսին փոխարինած Վրթանեսը (331-341 թթ.), շուրջ 333/4 թ. Մամուկ Գրիգորիսին ուղարկում են Աղվանք և, ինչպես վկայում են Արա մասին խոսող առյուղները, նաև Վիրք¹⁹:

Մամուկ Գրիգորիսի ընտրությունը պատճական չէր: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում կաթողիկոսական գահը զբաղեցնելու ժառանգական իրավունքը պատկանում

¹⁵ Նույն տեղում: Այս Մամատրուկը Բնտագյալում, Տրդատ Գ-ի մահից հետո, համեսն է զայխ Հայոց գամի հավակնություններով, սակայն ամեազողության մատմվելով, անցնում է մասքութերի մոտ, այստեղ հորջորշվում թագավոր, ստամում մոր ամում՝ Մամեսամ, և կովկասյան «քազմանդի» ցեղերից հավաքագելով մի մեծ քամակ՝ արշավում է Հայաստան՝ Ապատակ ումենալով ձեռք բերել Հայոց գամի: Նա կարողանում է գրավել Վաղարշապատը և մի ամջող տարի իշխել այստեղ: Մեկ տարի անց Օշական գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում նա պարտվում է և սպանվում, որով և վերջ են դրվում Հայաստանում գամակալելու նրա մկրտութերին: Մամատրուկ-Մամեսամի մեկ անձ լինելու և այլ մամրամասների մասին տեսն Հ. Ս. Սվայյան, Աղվանից թագավորության Արշակունյաց ճյուղի սկզբնավորումը: Բամբեր Հայաստանի արխիվների, Երևան, 1979 թ., թիվ 4, էջ 158-170:

¹⁶ Խորենացի, էջ 259:

¹⁷ Կաղամկատվացի, էջ 14:

¹⁸ Հայապատում, էջ 384:

¹⁹ Բուզանդ, էջ 20, Խորենացի, էջ 259, Կաղամկատվացի, էջ 14: Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 20:

Եր Լուսավորչի տոհմին և, Աղվանքում նկատի ունենալով այս հանգամանքն ու առաջնորդվելով Փայտակարանի ավագանու վերոհիշյալ ընթռնմամբ, քարոզիչ խնդրեցին Լուսավորչի տոհմից մնալին, որը նաև այնպիսի Բնուածար նպատակ էր նետապնդում, որ վերջինս հոչակված անվան շնորհիվ կլսեն նրա սերմանակցին և խոնարհությամբ կկատարեն նրա հրամանները:

Իրենց աշխարհի համար կաթողիկոս խնդրելով հայերից, աղվանացիները միաժամանակ խնդրեցին նաև, որ այսուհետև Աղվանից կաթողիկոսները ձեռնադրվեն Հայոց Կաթողիկոսի կողմից, որին հայերը համաձայնվում են: Այս քայլով սկիզբ է դրվում Հայոց և Աղվանից Եկեղեցիների միակամ եղբայրությանը և ամսախուս ուստին: Հետևելով այս կարգին՝ Աղվանից կաթողիկոսները դարեր շարունակ ձեռնադրվում են Հայոց Կաթողիկոսների կողմից²⁰, որն, ըստ Էռլյան, Աշամակում էր կրե Մեծ Հայքի քաղաքական ազգեցությունը: Եվ Խոսրով Գ-Ա Մամուկ Գրիգորիսին ուղարկում է Աղվանք, որ նաև հոր՝ Մեծ Տրդատի քաղաքակամանության շարունակությունն էր, և որով ինքը ևս իր ազդեցությունն էր տարածում այդ երկրում: Ալսահստով, Ս. Եղիշալից հետո տևակամ՝ շուրջ 200-ամյա մի ժամանակամիջոց անց, Աղվանքում ի դեմս Մամուկ Գրիգորիսի հայտնվում է մի նոր քրիստոնյա գործիչ: Նրա գործունեությամբ Աղվանքում սկսվում է քրիստոնեության աերթափամցման երկրորդ փուլը, որի ժամանակ այն Աղվանք էր հասնում Հայաստանից՝ հայ քարոզիչների միջոցով²¹:

Հայ Եկեղեցական ավանդության, Մամուկ Գրիգորիսը 15 տարեկան էր, եղանակած Վրաց ու Աղվանից կողմերի եպիսկոպոսությունը²²: Կաղամակատվացին էլ գրում է, որ Մամուկ Գրիգորիսը «զինգետասան ամօք ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն... Վրաց և Աղվանից աշխարհին»²³:

Փ. Բուգամինի մի տեղեկությունից երևում է, որ Աղվանքում Գրիգորիսի ժամանակ կային և գործում էին կրոնական հաստատություններ՝ Եկեղեցիներ, և Մամուկ Գրիգորիսը մեկնելով այնտեղ, կարգի է բերում դրանք, նոր ոգի ու շունչ հաղորդում: Պատմիշը գրում է. «Երթեալ (Գրիգորիսը - Հ. Ս.) նորոգեաց անդ Եկեղեցին լուսաւոր կարգօք»²⁴: Այս աշխատանքներին զուգահեռ Մամուկ Գրիգորիսն ընդլայնում է իր գործունեության աշխարհագրական շրջանակները, դարձնում ավելի ընդգրկում ու ծավալուն: Պատմիշների վկայությամբ նա Եկեղեցիներ է կառուցում քաղաքներում, շնորում ու զանազան բնակատե-

²⁰ Կաղամակատվացի, էջ 14-15:

²¹ Հ. Սվայան, Քրիստոնեության Աղվանք Աերթափամցման ուղիներ ու ժամանակաշրջամը, Պատմամասիրական համեստ, 2002 թ.:

²² Բուգամին, էջ 20:

²³ Կաղամակատվացի, էջ 36-37: Օրմանյան ճիշտ չի համարում Գրիգորիսի համար Բուգամինի ցուց տված տարիքը: Նրա կարծիքով, նա այդ ժամանակ 25 տարեկան էր («Ազգապատում, մաս Ա», Կոստամանուպոլիս, 1912, էջ 138): Հայ Արա, Մամուկ Գրիգորիսը ծնվել է Կեսարիայում 295 թ., Հայաստան է եկել հոր մետ միասին 310 թ., իսկ 320 թ.: 25 տարեկանուն ձեռնադրվել եպիսկոպոս: Համամիտ լինելով Ս. Օրմանյանի մետ Գրիգորիսի տարիքի Բարցում, սակայն կարծում ենք, որ թերևս կատարել է որոշ տեղաշարժեր, քանի որ մեր քննության ժամանակ Գրիգորիսը Աղվանք է մնկել ոչ թե 320 թ., այլ 333/34 թ.: Հետևաբար վերամայելու կարիք ունի նաև Օրմանյանի առաջարկած Արա ծմելյան տարեթիվը:

²⁴ Բուգամին, էջ 20:

դիմերում, քահանամեր ձեռադրում, շրջում հեթանուների մեջ և, նմանվելով իր մեծանուն պապին, նրանց քրիստոնեական հավատի բերում²⁵:

Հաղորդելով այն մասին, որ Գրիգորիսը եղել է նաև Վիրքի «կաթողիկոս»²⁶, պատմչերը սակայն ոչինչ չեն հաղորդում այս երկրում նրա կատարած գործունեության մասին: Նրանք դա անում են Աղվանքում նրա գործունեությունը պատկերող հաղորդումների հետ միահյուսված՝ առանց տարբերակման: Այսպես, օրինակ, Բուզանդը պատմելով, որ Գրիգորիսը եպիսկոպոսության աստիճանի հասավ Վրաց և Աղվանից աշխարհների վրա, ավելացնում է. «Երթեալ (Գրիգորիսը - Հ. Ս.) նորոգեաց անդ զեկենեցիսն լուսաւոր կարգօք»²⁷ կամ, «Գրիգորիսը - Հ. Ս.», որ կաթողիկոսն էր կողմանցն Վրաց և Աղուանից... շինեաց նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ»²⁸: Նույն է և Կաղամկատվացու մոտ: Նա ևս Վրաց և Աղվանից աշխարհում Գրիգորիսի գործունեության մասին պատմում է ընդհանուր բնույթի մկարագրություններով՝ շեշտելով, որ նա «լուսաւորէր զերկոսին զաշխարհն և հաստատէր քրիստոնական հասաւովն գնալ»²⁹:

Ինչպես երևում է պատմչների հաղորդումներից, Մանուկ Գրիգորիսի գործունեությունը աշված երկրներում հաջողությամբ էր ընթանում:

Նույն՝ 4-րդ դարի 30-ական թվականներին Աղվանքի քաղաքական ազդեցությունը տարածվում էր նաև իրենից հյուսիսին, Կովկաս լեռան ստորոտում սմկած ծրի Կոչվող քաղաքի վրա, որը Ծիրաց երկրի բնրդաքաղաքներից էր³⁰.

Եվ Մանուկ Գրիգորիսն իր գործունեության ոլորտում ընդգրկում է այս քաղաքը և, հավանական է կարծել, ողջ ազգագավառը ևս, որ նաև Աղվանքի քաղաքական ազդեցությունը քրիստոնեական գաղափարախոսությամբ ամրապնդելու նպատակ էր Բետավանդում³¹: Ավելի ազդեցիկ լինելու համար, նա իր հետ է վերցնում նիկոմիդիա քաղաքում

²⁵ Նույն տեղում, Կաղամկատվացի, էջ 37:

²⁶ Ըստ Մ. Օրմանյանի, նաև Գուգարքի վրա էր տարածվում «Գրիգորիսի հովվական հոգածությունը» (տե՛ս «Ազգապատում», Բ. Ա., էջ 138):

²⁷ Բուզանդ, էջ 20:

²⁸ Նույն տեղում, էջ 24:

²⁹ Կաղամկատվացի, էջ 37 (ընդգծ. - Հ. Ս.):

³⁰ Դատելով նրան այդ քաղաքը է ըստրել որպես իր քարոզչության վայր, կարելի է մակարել, որ այս եղել է Ծիրաց ազգագավառի կենտրոնը:

³¹ Պատմագրության մեջ Ծիրաքը համարվել է Աղվանքի ազգագավառներից մեկը, իսկ նրա բնակիչները՝ ճիղբերը, աղվանական ցեղեր (տե՛ս Բ. Տրեվեր, Օчерки по истории и культуре Кавказской Албании, IV в до н. э – VII в п. э., Москва-Л-град, 1959, с. 46: А. Акопян, Албания-алуапк в греко-римских и древнеармянских источниках, Ереван, 1987, с. 84-92):

Սակայն այսպիսի կարծիքը հենքելու և նրանց տարրեր երկրներ լինելու համարական ցույց տալու համար տեղեկությունների պակաս չի զգացվում ինչպես հումանունեական, այնպես էլ հիմն հայկական աղբյուրներում: Ըստ Պիլիմոս Ավագի, ճիղբեր (sillvii) վայրի ցեղեր էին և ապրում էին նույն Աղվանքի սահմաններից այն կողմ Կովկաս լեռան ամրող երկարությամբ. Հայության գրագիրներում առաջին աղբյուրը պահպանվել է Վահագի աշխարհագրության մեջ՝ պահպանվելով աղաք Արմանիա և Արմանիա պատմություններում:

Աղվանքի սահմաններից դուրս՝ Սարմատիայում (որոնց միջև սահմանը Սովամ-Ավամաս գնտն է) է Ծիրաց աշխարհը տեղադրում նաև Հայոց «Աշխարհացուցը» («Աշխարհացուցը Մովսեսի Խորենացւոյ», Հաւել-

նահատակված սրբերի՝ Զաքարիայի և Պանտալեոնի Աշխարհերը (արյունով լի պրվակները) և գնում թի: Այստեղ Մանուկ Գրիգորիսը եկեղեցի է կառուցում, որտեղ պահ է տալիս իր հետ բերած մասունքները, սպասավորական կարգ հաստատում, քահանա նշանակում Դամիել անունով մեկին որպես եկեղեցու սպասավոր, համայնքներ հիմնում և աշակերտներ պահում: Դամիելն էլ իր հերթին քրիստոնեական հավատի է բերում մի ճիղը մանկան և նրան դարձնում իր օգնականը: Նրանց օգնությամբ էլ Մանուկ Գրիգորիսն այդ «հեթանոսաց» Քրիստոսի լուս հավատն էր տարածում³²:

Ավարտելով իր գործունեությունը Ծηբաց երկրում և իր գործի շարունակողներ թողնելով այստեղ, Մանուկ Գրիգորիսն ուղևորվում է³³ Մաքրեաց երկիր, որի գլուխ էր կանգնած Սամեսան անունով մեկը, որն իրականում այն Սամատրուկն էր, որը, հայոց թագավոր դառնալու անհաջող փորձից հետո, այստեղ էր հայտնվել և, վերանվանվելով Սամեսան, հորջորժվում էր Մաքրեաց թագավոր տիտղոսով³⁴:

Այստեղ կրոնական առաքելությունից բացի նա ամենայն հավանականությամբ ունեցել է նաև քաղաքական խնդիր. համոզել Սամատրուկ-Սամեսանին հրաժարվել հայոց

ուածով մախմեաց, Վենետիկ, 1901, էջ 27):

Որ Ծիրքը Աղվանքի ազգագալակումներից չէր, իսկ ճիղքերն էլ աղվանական ցեղեր չեին, շատ պարզ երևում է Բրամից, որ Բրամ մասին խոսող մեր բոլոր հայ պատմիմերը (Ազաթանգեղոս, Բուզանդ, Եղիշե և ալլոր), որպես կամոն ճիղքերին և աղվանցիմերին հիշատակում նմ առանձին-առանձին, ընդ որում, առաջիմենքին Կովկասյան «քամմանից» ցեղերի շարքում: Իրակամա այն է, որ Բրամը, ուսումնասիրվող ժամանակաշրջանում 4-րդ դարի 30-ական թվականներին, գտնվել են Աղվանքի նմթակայության տակ և կրել Բրամ քաղաքական ազգեցույունը: Դա է ցուց տալիս Մ. Կաղամկատվացին իր Աղարագործությամբ: Հայ պատմիչը, որի «Աղվանից աշխարհի պատմությունը» միակ երկն է, որտեղ հիշատակվում է Ծիրի քաղաքը որպես մի շարք պատմական իրադարձությունների տեղի, գրում է, որ Մանուկ Գրիգորիսը մեկնում է «ի մեծ քաղաքը Ծիրի յԱղուանից իշխանութեամ (Աղվանից իշխանության տակ գտնվող Ծիրի մեծ քաղաքը)» (Կաղամկատվացի, էջ 37, ընգած. - Հ. Ս.): Իսկ այս հաղորդում իր մեջ ոչինչ այլ բամ չի պարունակում, քան այն, որ քաղաքը, ուրեմն և ողջ ազգագալակուր, նմեակա էր Աղվանքին: Լիներ այն Աղվանքի ազգագալակումներից մեկը, պատմիչը անհրաժեշտ չէր համարի հատուկ շնչուելու Բրամ քաղաքական կարգավիճակը: Խնդրու առարկա ազգագալակու նմթակայությունն Աղվանից համար հաստատվում է նաև պատմիչի մի այլ հաղորդումից, որտեղ նշվում է Աղվանից Ծիրի քաղաքը ապատամությամ մասին: «Բերդաքաղաքը անուանեալ Ծիրի պատմամքեալ յԱղուանից թագաւորը և տունեալ ի պարսից արքայն» («Իսկ այլ ժամանակ Ծիրի աղվանական բերդաքաղաքը ապատամքեալ Աղվանից թագավորի դեմ և ձեռք մեկնեց պարսից թագավորին»: Կաղամկատվացի, էջ 39): Ուրեմն այն եղել է Աղվանից նմթակայության տակ, որ հետո պատմամքեալ է և դուս եկել: Միայն դա կարող էր լինել ապատամքեալ պատմառը: Մ. Կաղամկատվացին էլ իր երկու հաղորդումներով, որոնք լրացնում են միմյանց, հենց դա է վկայում բացահայտելով այս երկու իրադարձությունների միջև եղած պատճառ-հետևանքային կապը: Այսպիսով ճիշտ չեն ուսումնասիրողները՝ Կարծելով, թե Ծիրաց երկիրը Աղվանքի ազգագալակումներին է, իսկ Բրամ քանակիչներին՝ աղվանական ցեղերից մեկը: Նրանք տարբեր երկրներ էին, որոնցից առաջիմեր 4-րդ դարի 30-ական թվականներին գտնվել է Վերջինին նմթակայության տակ:

³² Կաղամկատվացի, էջ 37:

³³ Նրա հետամարդուց հետո Ծիրի քաղաքը կամ որ մումն է՝ Զդրաց գավառը, ապստամբում է Աղվանից արքայից, սպասում Դամիել քահանային ու ճիղը մանկամը և իր հմազանությունը հայտնում Պարսկաստամին (Կաղամկատվացի, էջ 39-40): Այս իրադարձությունները այնպիսի եղանակացության նմ մոլում, որ երկիրն ապստամբը է Աղվանիցից, ընդիմանալով քրիստոնեությամբ, որի համար և սպամել են վերջինին սպասավորներին նոր կրոնի ծիլերը արմատախիլ ամելու համար և հմազանություն հայտնել Պարսկաստամին:

³⁴ Հ. Ս. Սպազյան, Աղվանից թագավորության Աղշակումաց ճյուղի սկզբանավորումը, էջ 158-170:

գահն անօրինական ճանապարհով ձեռք գցելու մտքից և կամխելու կրկին Հայաստան արշավելու նրա ծրագիրը, որն իրականացնելու էր Հյուսիսային ցեղերի օգնությամբ, նրանց հրապուրելով ավարառության և հափշտակության գաղափարով: Այսպես կարծելու համար հիմք է հանդիսանում Գրիգորիսի քարոզչության էությունը. «Ասեղի է Աստուծոյ աւարութիւն և յափշտակութիւն, սպանութիւն, ազահութիւն, այլազրկութիւն, զայլոցկերութիւն, ցանկութիւն այլոց ստացուածոց»³⁵: Մանուկ Գրիգորիսը գրեթե համարում է իր նպատակին: Սկզբնական շրջանում Սանատորուկ-Սանեսանը լսում է նրան ու համաձայն վում³⁶: Հաջողվում է նովմիսկ հավատի բերել Սանատորուկի որդիներին ու էլի 3370 մարդու³⁷: Սյանութեան նա մտնում է Սանեսան-Սանատորուկի բանակ և իր առաքելությանը համապատասխան աշխատանքներ տանում: Բայց շուտով բարբարութերն զգալով, որ նոր վարդապետությունն անհարիր է իրենց կենցաղին, թույլ չի տալիս ավարառություն, սպանություն, այլոց ունեցվածքի հափշտակություն և այն, խորհրդութ են անում միմյանց մեջ և եզրակացնում, որ Մանուկ Գրիգորիսն իրենց մոտ է եկել Հայոց թագավորի հանձնարարությամբ, որպեսզի կամխի դեպի Հայաստան ծրագրվող արշավանքը, և որոշում են սպանել նրան ու իրագործել իրենց նպատակը: «Այս խորհրդութ-, ասում են նրանք, - Հայոց թագաւորինն է. զայտ յեղել առ մեզ, զի պատու ուսմամբ խափանեսք զմեր արշաւան սապատակութեան հիմի յաշխարհն իրմէ. այլ եկայք զսա պակասեցուցուք ի միջոյ, մեք ի Հայս արշաւացուք»³⁸: Նրանց ճնշման տակ Սանեսան-Սանատորուկն այլ ելք չունենալով՝ նրան սպանելու թույլտվություն է տալիս: Մանուկ Գրիգորիսի սպանությունը կատարվում է մի առանձնակի դաժանությամբ: Կապելով մի ամենի ծիռ պոչից, նրան բաց են թողնում Կասպից ծովի առափնյա Վատնյան կոչվող դաշտով մեկ, մինչև վախճանվելը³⁹: Մանուկ Գրիգորիսի վախճանն այսպես են նկարագրում նաև Մ. Խորենացին ու Մ. Կաղամկատվացին⁴⁰: Հայաստանից գնացած նրա աշակերտները վերցնում են իրենց ուսուցիչ դիմ և թերում-հասցնում են Արցախի Հարանդ գավառի Ամարաս գյուղ և թաղում տեղի Ս. Գրիգոր Լուսավորչի հիմնադրած եկեղեցում⁴¹:

Նրա նահատակությունը տեղի է ունենում 336/337 թ.⁴²:

³⁵ Բուզանդ, էջ 26:

³⁶ Նովմ տեղում:

³⁷ Կաղամկատվացի, էջ 26:

³⁸ Բուզանդ, էջ 26:

³⁹ Նոյն տեղում:

⁴⁰ Խորենացի, էջ 259-260, Կաղամկատվացի, էջ 38-39:

⁴¹ Բուզանդ, էջ 26, Խորենացի, էջ 260, Կաղամկատվացի, էջ 39, 65:

⁴² Եկեղեցական ավանդության համաձայն, ավելի ուշ Աղվամից Վաշագան Գ Բարենապատ թագավորի (480-510 թթ.) օրոք, հայտնաբերվում են սրբի նշանագրերը: Թագավորը նշանագրերի մեծ մասը թողնում է Ամարասում, իսկ մնացածը բաժանում Արևելից կողմանց եկեղեցական թեմերի միջև (Կաղամկատվացի, էջ 78-86): 1969 թ. Ամարաս վանքի պեղումների ժամանակ բացվել է մի գերեզման. որում գտնվել է կլոր արկդ, իսկ արկդում մի կմախք կծկված վիճակում: Քարերից մեկի վրա եղել է հայերեն ազգանուն. «Սա Ս. Գրիգորիսի իմաստում այլի գերեզմանն է» բովանդակությամբ: Ուստիմասիրողների կարծիքով սա իրոք Մանուկ Գրիգորիսի գերեզմանն է (Տնւն Պ. Բ. Գεօսեա, Հրիստություն և Կավականություն Ալբանիա, Բակու, 1984, ս. 34): Բայց արձամագրությունը, ամսուս, կարող էր փորագրված լինել ամբանեմատ ուշ ժամանակներում, որն էլ կասկածելի է դարձնում ուսումնասիրողների եզրակացությունը:

Սպանելով Մանուկ Գրիգորիսին, Սամատրուկ-Սամեսամը հալածանքներ է ակտում բոլոր նրանց նկատմամբ, ովքեր քրիստոնեություն էին ընդունել: Նրանցից շատերը փրկվելու համար փախչում են և ապաստանում Արցախի Դիզափայտ կոչվող լեռան վրա կառուցված Կատարո վաճքով⁴³: Բայց Սամատրուկ-Սամեսամը, որին այլևս ոչ չեր խանգարում, մեծաքանակ և բազմացեղ բանակով Հայաստան արշավելիս հասնում է Արանց և բոլորին կոտորում չխնայելով նովմիսկ որդիմերին⁴⁴:

Մանուկ Գրիգորիսը քրիստոնեական վաղ շրջանի ամենավառ գործիչներից էր: Նա վախճանվեց, բայց Արա ջանքերն ապարդյուն չանցան: Քրիստոնյա այս քարոզչի շուրջ 8-ամյա (330-337 թթ.) գործունեության շնորհիվ Արք ուսմունքն ամրապնդվում է Հայոց Արևելից կողմերում, մասնավորապես Փայտակարանում ու Արցախում, և ճամաչում ստանում հյուսիսային ցեղերի մոտ: Բայց Արա գործունեությունն առանձնապես արդյունավետ եղավ Աղվանքում: Այստեղ այն ոչ միայն լայն տարածում է գտնում ու ամրապնդվում, այլև պարարտ հող նախապատրաստում 4-րդ դարի 70-ականների սկզբին պետական պաշտոնական կրոն դառնապելու համար:

Մանուկ Գրիգորիսի գործունեությամբ սկիզբ է դրվում հայ-աղվանական եկեղեցական հարաբերություններին, որոնց տևողությունը չափվում է դարերով:

⁴³ Հիմա էլ կանգում է: և գտնվում է Արցախի այժմյան Զիարաթ լեռան վրա (Գաղանկատվացի, էջ 281, ծառըություն 137):

⁴⁴ Կաղանկատվացի, էջ 119: